

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Հայկական պատմագրութեան նահաւական Ագաթանց Ագաթանգեղոս՝ քարտուղար մեծին Տրդատայ կաւանդուի: Վարուց և կենաց վրայ մանրամատն տեղեկութիւնը իսպառ կը պակսին և եղածն իսկ անկատառ և երկրայելի է: Յետագայ ազգային տարեգիրք և մատենագիրք՝ ինչպէս Ձենոր Գլակ և Մովսէս Խորենացի և Ղազար Փարագեցի ոչ միայն Կ'ընդունին անոր գոյութիւնը և անոր գրուածն, այլ և անոր ճշմարտապատում և պարդախօս ըլլալրւն կը վկայեն. պատմական ազգին լրութիւնն ալ 1500 տարի է որ այսպիսի մատենագրի մը գոյութեան կենաք շափ վկայ է: Ագաթանգեղոս ինքնին հայկական օրինակին յառաջաբանին մէջ կ'ըսէ. «Հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս որ ՚ի Քաղաքէ ՚ի մեծն Հռովմայ, և վարժեալ հայրենի արուեստիւ հոռոմարէն և յունարէն ուսեալ դպրութիւն, և ոչինչ կարի անտեղեակ լիւալ ձեռնարկութեան նշանագրաց կարգել ինձ ՚ի ձեռնարկութենէ նշանագիւտ ժամանակադրացն պատմել նախ զիայրենեացն գործս քաջութեան քաջին խորոցիւ » . բայց դժբաղդաբար այս հայկական յառաջաբանն երկու ձեռագրի մէջ միայն գտնուի, որով ժամանակիս ոգեւյն և գիտութեան գէմ է այս վկայութիւնը հիմն առնուլ ՚ի հաստատութիւն գոյութեան մատենագրին. յոյն օրինակն կամ թարգմանութիւնն որ կատարելագոյն է շատ մասամբ չունի այս յառաջաբանը:

Ագաթանգեղոս անունը յոյն անուն կ'երեայ և Հայաստանի արևմտեան թիւղանցական սահմանագլուխ յոյն գաւառի. մը ծնունդ. սակայն Ագաթանգեղոսի անունն անգամ իր գոյութեան վրայ տարակուսելու պատճառ մ'եղեր է. լեզուագէտք աւետարեր աւետարանապատռում կը թարգմանեն Ագաթան-

գեղոս անունն աւանդեալ ՚ի հնոց պարսիկ, լատին և հնդիկ ձևով. մեր կիրակոս պատմիչն ալ այս նշանակութիւնը տալէն հետի չէ: Եթէ Ագաթանգեղոսի գործոյն կրկին օրինակ կայ հայ և յոյն, և եթէ վերջինը առաջնոյն թարգմանութիւնն է յայտնի ապացուցուած է, և գիտնական աշխարհն ալ անտարակոյս կը համարի զայն :

Բայց երկուց օրինակաց համեմատական և լեզուագիտական խորին քննութիւն մը կարծենք բաւական է յայտնելթէ ոչ արդի Հայ Ագաթանգեղոսն և ոչ յօյն՝ բնագիր կրնայ սեպուիլ բուն Ագաթանգեղոսի: Եթէ եղած է պատմական անձ մը Ագաթանգեղոս՝ բայց ՚ի բուն և հաստատուն հաւաստեաց՝ կը վկայեն կերպով մը արդի երկեղոս օրինակաց մէջ գանուած անմիտ տարբերութիւնները և այնպիսի պատմական անձանց յիշատակութիւնը որ Ագաթանգեղոսէն դար և կէս ետքը կ'ապրէին :

Հեթանոս և հաւատարիմ ատենադըպիր Ագաթանգեղոս մը չէր կրնար իր տիրով և թագաւորին քրիստոնէութենէն առաջ վարկելու մտօք յետնոց աւանդել: Եւ անկարելի է մեր արդի ծանօթութեամբ հաւատալ թէ Ագաթանգեղոս ականջաւոր և ականատես վկայ ըլլայ պատմական զիապաց և ոչ հեղինակ այն երկայն և նոխ ճառին որ լուսաւորչայ բերան կը գրուի. ճառ մը որ ՚ի հաւատաս արմատացած ազգ մը և ժողովնորդ մը կրնայ հասկրնալ և ոչ թէ վաֆթանօրեայ նորավարժ երախայ ազգ մը:

Ագաթանգեղոս պատմագրեր է, այսիր բնագիր պատմագրութիւնն ատեկաւուն անհետեղած կ'երեւնայ, և արդի երկեղու Ագաթանգեղոսն յետին ժամանակ մը գործ կ'երեւնայ, որ հին Ագաթանգեղոսին գործը հիմն դրեր է. բայց

պատմութիւնը բոլորովին այլափոխուերէ, և զիւանական և ատենական գըրուածքն վկայաբանութեան փոխուերէ:

Բայց զարմանք է որ մեր հնաւանդ տարեգիրք արգի Ագաթանգեղոսը կը ճանչնան. և հայ օրինակին լեզուին յրատակութիւն, ճոխութիւն և հմտութիւնն ալ թարգմանչաց զարուն արժանաւորէ, և մանաւանդ թէ ուրիշ յեանագոյն դարու մը ընծացել ազգային մատենադրական պատմութեան ընդգեմ է:

Այս զիտողութիւններով անշուշտ տարակոյսներ հանեցին երևելին Պարոնիսու ծիրանաւոր, Փապէպրոք և Ստելինկ:

Արդի Ագաթանգեղոսն, դռնէ հայ օրինակն՝ թարգմանչաց զարու գործ է. բայց անհետազոտելի գաղանիք մ'է, թէ ինչն համար մեր ընտիր մատենադիրք եթէ կար իրաւի Ագաթանգեղոսի բնագիրն՝ զայն մէկդի թողուցին և անոր վրայէն նոր և օտար յաւելուածներով շինուածը գործածեցին: Կը զարմանանք Լանկլուայ հայագէտ բանասիրին անդյ ծանօթութեան մը վրայ. կը համարի թէ Զենորայ այս խօսքը, « Եթո ժամանակաց քեռորդի նորա (Յ. Յակովայ) գնաց յաշխարհն Գթաց և անդ թագաւորեաց. զոր յետոյ Տրդատ ըմբըսնեաց, մինչ առ արքայն թունաց էր: Զի սա էր որ եկն ՚ի պատերազմ՝ վերայ Դիոկղետիանոսի արքային Յունաց. որպէս Ագաթանգեղոս պատմէ զայսոսիկ »: Զկայ Ագաթանգեղոսի մէջ. որով կը հետեցընէ թէ Զենոր բնագիրը դիմացը ունէր անշուշտ: Ըստ Զենորայ՝ Ագաթանգեղոսի պատմածն Գթաց թագաւորին Տրդատայ բռնուիլը, Գթաց թագաւորին Դիոկղետիանոսի վրայ պատերազմ ելլին է և ոչ թէ Գթաց թագաւորին սրբոյն Յակովայ ազգական ըլլալն է, ինչպէս կ'ուզէ համելնալ:

Դազար փարպեցի կ'ըսէ. « Ակիզըն առաջին պրոց պատմութեանն Հայոց. որում սկիզբն արարեալ պատմեաց ըստուգիւ այլն երանելի Ագաթանգեղոս.

՚ի մահուն Արտեանայ յԱրտաշրէ՝ յորդոյ Սասանայ՝ բռնաւոր Ստահարացւոյն. և զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութեան կրապաշտութեան յաստուած. գիտութեան ճշմարտութիւն, ՚ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգորիսի, յորոյ անուն և զգիրսն անուանեալ կուն Գրիգորիսի »: Եւ ուրիշ տեղ Ագաթանգեղայ բովանդակութիւնն այսպէս կը համառօտէ. « Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ՚ի նոցանէ զժամանակաց և զդարուց աշխարհիս Հայոց բազմագիրմի յեղափոխութիւնս, յատոյդ և յանարխալ կարգաւորութեան առաջին գրոցն. զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս. այր բանիբուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգիւ, ստուգարան ՚ի կարգագրութիւն ճառից և յարմարագիր ՚ի պատմութիւնս ասացուածի իւրայ: Սա զնուազումն թագաւորութեան արշակունյն Արտաւանայ, և զգօրանալն ստահացւոյն Արտաշրի որդոյ Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով կարգեալ զրոշմեաց. զբինափնդութիւն խոսրովու, և կտորակուսանս գոռոզացեալ Ստահրացւոյն. զխորհուրդն և զիստամունան գտողի հնարս յաղագս մահուն խոսրովու, զխորհամանկութեան զմուածութիւնն Անակայ, և զսպանումն ՚ի նմանէ խոսրովու՝ նենգաւառ խարէութեամբ. զմատնումն յայնմէնտէ զաշխարհս Հայոց ՚ի ձեռու թագաւորութեան օտարի. զիստացացնելն դայե. կացն զորդիս խոսրովու յօտարութիւն առ ՚ի յապրումն. զհկայարար միւս անգամ զգարձն Տրդատայ, և զյաղթօլ մարտիւ ունելն զիւրոյն զնախնեացն քաֆարար զթագաւորութիւնն որբին սրբոյն. և թէ որպէս տարաւ անպատումն և անբաւ բազում չարչարանացն զառապակէս օգնականութիւնն իրիստոփի որ ցուցաւ ՚ի վերայ սրբոյն ՚ի հիացումն գեռ ևս մոլորեալ մարդ.

կան . զհամբերութիւն տեսլութեանն այնչափ ամն 'ի վիրապին . ըստ կան- խագէտ տնտեսութեանն վերնոյն , որ պահէր զնահասաւակն 'ի գործն Հայոց . զեկու սուրբ կուսանացն 'ի Հռովմայե- ցոց քաղաքէն , և զհեղումն մարտիրո- սական արեանն 'ի Վաղարշապատ քա- ղաքի , յոռոգումն դայարութեան գուա- ցեցց տիոց մարդկան . զեկու սրբոյն Դրի- գորի 'ի խոր վիրապէն , և զհանումն Հայաստան աշխարհին 'ի խաւարէ ան- գիտութեանն յաստուածային արքայու- թեանն լցոյ . զյորդորումն յայնմհետէ վարդապետութեան կենաց աշխարհիս Հայոց . զկտակս մկրտութեան լրաց զոր փրկիչն Գրիստոս 'ի ձեռն մեծի , նահասուակին Գրիգորի բարեխօսու- թեամբն ևս սուրբ կուսանացն՝ ծաւա- լեցոյց յաշխարհիս մերում . զշինութիւն եկեղեցեաց , զպայժառութիւն քահա- նայից . զիտումբս բազմամբոխ ժողո- վրդոց 'ի տօնս Փրկիչն և 'ի ժողովմունս յիշատակաց սրբոց : Զոյս ամենայն , ևս առաւել քան զայն զիտութիւն յիւրում հաստատուն և անսխալ կար- գաւորութիւնն պատմեաց մեղ երա- նելի այրն Աստուծոյ Ագաթանգեղոս :

Այս խօսքերն յայտնի արդի Ագաթան- գեղոսն կ'ակնարիեն և անոր գոյութեան հաստատուն վկայութիւն մ'են : Նոյն- պէս Խօրենացի շատ տեղ և մասնաւոր երկու տեղ արդի Ագաթանգեղոսն հա- մառուստաբար կը քաղէ , այսպէս . « Յա- ղագս սորա (Վաղարշայ) և համաստոհ- միցն կարճ 'ի կարճոյ իմն անցանելով աշող քարտուղարն Տրդատոյ Ագա- թանգեղոս , փոքր 'ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ Պարսից թագաւո- րին , և զբանալ տէրութեանն Պար- թեաց , Արտաշը որդւոյ Սասանայ , և զնուաճել Պարսից ընդ ձեռամբ նորա . և զինախնդիր լինել խոսրովայ հօր Տըր- դատոյ , և ասպատակաւ հինից աւե- րել զաշխարհն Պարսիկ Ասորեստանի : Յետ որոյ ասէ , թէ յշեաց խոսրով յիւր բնիկ աշխարհն 'ի կողմանս Քուշանաց , զի իւր տոհմայինքն 'ի թիկունս հա- ցեն , և Արտաշը ընդդէմ կացցեն . Այլ

նորքա , ասէ , զինէին ունկնդիր , զի հա- ւանեալք և միամտեալք էին 'ի տէ- րութիւնն Արտաշը քան ընդ տէրու- թիւն ազգատոհմին իւրեանց եղայրու- թեանն : Եւ եթէ , խոսրով առանց նո- ցա վրէժս պահանջէ . և զնովիմբ ա- ծեալ՝ ասէ , թէ ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն գարձուցա- նէր : Ասէ ապա և զգան Անակայ նեն- գութեամբ , հրապուրեալ 'ի խոստ- մուն Արտաշը . որ ասաց՝ եթէ զրոն պատուական զձեր սեպհական Պահ- լան , զայն անդրէն 'ի ձեզ գարձուցից , և զքեզ թագաւ փառաւորեցից : Վասն որոյ յանձն առեալ Անակայ , սպանանէ զիտորով » : Խորենացւոյն հատուածոց երկայնագոյնը բերի , որովհետեւ ուրիշ շատ տեղ ալ կը միշէ բայց համառօտի . սակայն բոլոր հատուածոց մէջ արդի Ա- գաթանգեղոսն կ'երկի և ոչ այլ : Ագա- թանգեղոսի և իր մատենազրած հայ պատմութեան գոյութիւնը պատմական անմխտելի հշմարտութիւնն մը կրնայինք սեպել՝ եթէ և մի միայն ազգային հեղի- նակ , հեռաւոր կամ մերձաւոր ժամա- նակաւ , յիշատակէր անոր բնագիրն և ոչ թէ երկրնագիր Ագաթանգեղոսն :

Հինգերորդ գարէն վերջն հայ մատե- նադիրք իրու ինքնագիր երկասիրու- թիւն Ագաթանգեղոսի՝ որշակի զար- դին կը գործածեն . յիշատակաց խիստ համառօտութեան պատճառաւ թէ պէտ շատ հեղինակաց նկատմամբ զայս չկըր- նանք բացարձակապէս հաստատել , սա- կայն յայտնի է թէ ներուղիչը լուսա- ւորի , Սարկաւագ վարդապետ , վար- դան բարձրերդցի , Յովհաննէս եր- զընկացի , Յովհան կաթողիկոս , Ստե- փան Օրբելեան պատմագիրք՝ ուրիշ Ա- գաթանգեղոսն մը մոքերնէն ալ անցու- ցած չեն :

Ագաթանգեղոսի պատմական տարրն 226-330 միջոցին հայկական գէպերն են : Մատենի ներքին կազմութիւնն ալ եռամասն է . ա . Լուսաւորչի , Հռիփ- սիմեանց և Գայիանեանց վկայարանու- թիւնն է և Հայաստանի առաքելաշնորհ

քարոզչն հրաշալի ավատութիւնն , որ
երկրորդ մասին հետ կը կապուի այսպէս .
« Արդեք սկսցուք շնորհագ Քրիստոսի
պատմել մի ըստ միոնէ մանրապատում
նշանակօք , և դուք ունկնդիբ եղեալ
սրտի մոտք լուիջիվ » : բ . Վարդապե-
տովթիւն սրբոյն Գրիգորի : գ . Դարձ
փրկութեան Հայաստան աշխարհի , որ
կը լմնայ Տրդատայ և լուսաւորչի ՚ի
Հռովմ ըրած ճամբորդութեամբ , ըստ
ամենայն պարագայից :

Որչափ որ երկը մասին ալ մատենա-
գրական ոճն նոյն երևնայ , սակայն ա-
նիրաւ չէ երկրորդ մասն եկամուտ սե-
պել և երրորդն յաւելուած . վերինոյս
մեծ հաւասարիք են կորիւնի հետ ունե-
ցած անթիւ նմանութիւնք բանից և
բառից :

Հմուտ մը կարծեց և կարծեցնելու
առիթ եղաւ . թէ արդի Արքաթանգեղոսի
օրինակն յոյն բնագրէ թարգմանուած
է եօթներորդ դարու Եղնիկ երիցու ձեռ-
քով՝ Հռիփսիմեանց նշխարաց նոր գիւ-
տին պատեհաւ , որ կոմիտաս կաթողի-
կոսին (610-615) ատեն կը հանդիպի .
ուրեմն արդի և յոյն և հայ օրինակներն
երկրայելի են , և եօթներորդ դարու հեղի-
նակն աղբիւր եղած է ուրիշ ամեն յե-
տագայ թէ հայ և թէ յոյն վկայարա-
նութեանց . բայց նկատմամբ թարգմա-
նութեան դիտելու է թէ քննագատու-
թեան ներքին պատճառն նպաստաւոր
է այս կարծեաց . այսինքն արդի Ագա-
թանգեղոսի հայկաբանութիւնն եօթնե-
րորդ դարու լեզու է , կամ եօթներորդ
դարու մէջ նման լեզու ուրիշ ժամանա-
կակից հեղինակի մ'ալ քով կը գոնուի :

Արքաթանգեղոսի լեզուն հայ մատենա-
գրութեան մէջ յատակութեամբ և ճո-
խութեամբ նախաթռող է , և հինգերորդ
դարու հրաշարան թարգմանչաց վայել՝
քան թէ եօթներորդ դարու հեղինակի
մը . արտաքին բաւական պատճառ ալ
չկայ Եղնիկ երիցուն թարգմանութիւնը
վաւերացնելու :

Ինչպէս 1876ին խորենացւոյն Հայոց
պատճութիւնն (Ցես Բազմավէպ 1877 .
Երես 45 . 110 . 213 . 289) , 1877ին ալ
Արքաթանգեղոսի պատճութիւնը դար-
ձեալ քննագատութեան նիւթ եղած է
ամաւ առաջ մեզ ծանօթ գերմանացի
զիտնականին : ինքն Հայագէտ չէ որով
դիտողութեան համար զիմնացը ունեցեր
է Լանկուայի հաւաքածուն (Collection
des historiens anciens et modernes de
l'Arménie. Tom. prem. pag. 110) , յոյն
բնագրաւ և իտալերէն թարգմանութը .
Ինչպէս ինքը կ'ըսէ ծանօթութեան մը
մէջ Հայ-Յոյն բնագրաց հաւասարու-
թիւնը և տարբերութիւնը իտալերէն
թարգմանութեամբ կը գտնէ , անոր
համար ալ Յոյնի և իտալերենի զլուխ-
ները կը նշանէ և հայերէնի էջերը փա-
կագծով . հայ թարգմանութիւն ուսկից
գաղիերէնը թարգմանուեր է 1835ին
եղած մեր տպագրութիւնն է , որով է-
շերն ալ քիչ շատ տարբեր են . բարեսէր
ընթերցողաց դիւրութեան համար ար-
դի տպագրութեան էջերով կը նշանա-
կենք , երբ թարգմանենք և հրատա-
րակենք Բազմավէպին միջոցաւ կամա-
ռանձին իր քննագատութիւնը :

Հ . Ներս . Զւտուեաւ